ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ

II հատոր

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1.Շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ցուցանիշները (ՇԱԽՑ) առաջարկվում են Հայաստանի Հանրապետության տարածքում կապիտալ շինարարության ծրագրերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում շենքերի և կառուցվածքների շինարարության հաշվարկային արժեքի որոշման, ինչպես նաև գոյություն ունեցող կառույցների նախնական գնահատման համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.Շենքերի և կառուցվածքների շինարարության արժեքի խոշորացված ցուցանիշների սույն ժողովածուն հանդիսանում է 1998թ. թողարկված ժողովածուի լրամշակված տարբերակը:

3.1998թ. թողարկված ժողովածուի 8-րդ կետում բերված է շենքերի և կառուցվածքների արժեքի խոշորացված կառուցվածքը, որտեղ ըստ պատերի և միջնորմների ծախսերի չափը (47,5%) որոշված է ատաղձագործական շինվածքների (պատուհաններ, դռներ) հաշվառմամբ, որոնց չափը ծախսերի ընդհանուր կառուցվածքի մեջ կազմում է 10%: Արժեքի խոշորացված կառուցվածքում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

պատեր և միջնորմներ - 37,5%

հարդարման աշխատանքներ -27,5%: